

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Սույն թվականի մարտի 15-ին և մայիսի 13-ին Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 9 շրջանավարտների դիպլոմային ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը:

Մարտի 15-ի պաշտպանությանը ներկա էին Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սիոն արքեպս. Մանուկյանը (ատենապետ), Մայր Աթոռի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը և հյուրեր:

Պաշտպանությանը ներկա էին նաև ՀԽՍՀ Մինիստրների Խորհրդին առնթեր Հայ Եկեղեցու Գործերի Խորհրդի նախագահ տիար Ստեփան Վարդանյանը և տեղակալ տիար Ռաֆիկ Զարգարյանը:

Հոգևոր ճեմարանի տեսուչ արժանապատիվ Տ. Եզնիկ քհն. Պետրոսյանի բացման խոսքից հետո, ավարտաճառերի պաշտպանության քննիչ հանձնաժողովի նախագահ գերաշնորհ Տ. Անանիա եպս. Արաբաջյանը քննիչ հանձնախմբի անունից, որի կազմում էին հոգևոր ճեմարանի դասախոսներ, բանասիրական գիտությունների դոկտոր պրն. Փայլակ Այնթափյանը և բանասիրական գիտությունների թեկնածու պրն. Գևորգ Բաղդիշյանը, ներկաներին է ներկայացնում Հանձնախմբի եզրակացությունները շրջանավարտների ավարտաճառերի վերաբերյալ:

Այնուհետև իրենց ավարտաճառերի բանավոր պաշտպանությամբ հանդես եկան և Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի շրջանավարտի դիպլոմ ստացան՝ Տ. Արսեմ քհն. Հունանյանը, Սիմոն սրկ. Առուշանյանը, Անդրանիկ սրկ. Տերտերյանը, Հովակիմ սրկ. Քիլեճյանը և Էլբեկ սրկ. Քարամյանը:

Շրջանավարտների երկրորդ խմբի մայիսի 13-ի պաշտպանությանը նախագահում էր Գերագույն հոգևոր խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպս. Մանուկյանը: Քննիչ հանձնաժողովը այս անգամ հանդես էր գալիս հետևյալ կազմով. Եգիպտահայ թեմի առաջնորդ Տ. Զավեն արքեպս. Չինչինյան (նախագահ), հոգևոր ճեմարանի դասախոսներ, բանասիրական գիտությունների դոկտոր պրն. Փայլակ Այնթափյան և բանասիրական գիտությունների դոկտոր պրն. Խաչիկ Բադիկյան:

Այս անգամ հոգևոր ճեմարանի տեսուչ արժանապատիվ տեր հոր բացման խոսքից հետո իրենց դիպլոմային ավարտաճառերի բանավոր պաշտպանությամբ հանդես եկան հոգևոր ճեմարանի շրջանավարտներ Մուրադ սրկ. Սողոմոնյանը, Արա սրկ. Հովհաննիսյանը, Սերժիկ սրկ. Մանսուրյանը և Սարգիս սրկ. Ղանդիլյանը:

1. Արամ քհն. Հունանյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Սյունիքի Սոդք գավառի պատմամշակութային հուշարձանները»:

Ուսումնասիրությունը բաղկացած էր ներածությունից, երկու բաժանումներից (Սոդքի հին բնակավայրերը, վանքերն ու եկեղեցիները և Սոդքի վիմագրությունը) և պատմամշակութային հուշարձանների ու խաչքարերի մոտ 95 լուսանկարներից իրենց արձանագրություններով:

Ներկայացված աշխատանքը արժանացավ լավ գնահատականի:

2. **Սիմոն սրկ.** Առուշանյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Սողոմոնի» աշխատությունը: Ներկայացված ավարտաճառը բաղկացած էր 44 էջ ուսումնասիրությունից, որն ընդգրկում էր Գրիգոր Տաթևացու կյանքն ու մատենագրական վաստակը, ՄՄ № 1099 ձեռագրի նկարագրությունը և 82 մեքենագիր էջ բնագրից:

Ներկայացված ուսումնասիրությունը գնահատվեց քաջալավ:

3. **Անդրանիկ սրկ.** Տերտերյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Գանձասարի կաթողիկոսությունը 18-րդ դարի առաջին կեսին»: Ներկայացված ուսումնասիրությունը կազմում էր 55 մեքենագիր էջ և ուներ հետևյալ բաժանումները.

Նախաբան, Գանձասարում տիրող քաղաքական վիճակը 18-րդ դարի առաջին կեսին, Գանձասարի կաթողիկոսությունը 18-րդ դարի առաջին կեսին և եզրակացություն:

Ներկայացված ավարտաճառը գնահատվեց լավ:

4. **Հովակիմ սրկ.** Քիլեճյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Մատթեոս Ջուղայեցու «Մեկնութիւն Յովհաննու ավետարանի» երկը:

Այն բաղկացած էր 68 մեքենագիր էջ ուսումնասիրությունից, որտեղ հեղինակը համառոտ կերպով ներկայացրել էր իր ավարտաճառի բովանդակությունը, ձեռագրի հիշատակագրություններն ու տարընթերցումները և 153 մեքենագիր էջ բնագրից՝ ըստ ՄՄ № 5871 ձեռագրի:

Ներկայացված աշխատանքը գնահատվեց բավարար:

5. **Էլբեկ սրկ.** Քարամյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Եփրեմ Սանցի Աջապահյան կաթողիկոսի «Մեկնութիւն Յովհաննու մարգարէի» աշխատությունը:

174 մեքենագիր էջից բաղկացած այս ուսումնասիրությունը կազմված է առաջաբանից, չորս առանձին գլուխներից և վերջաբանից:

Ներկայացված աշխատանքը արժանացավ լավ գնահատականի:

6. **Մուրադ սրկ.** Սողոմոնյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Եսայեայ մարգարէի» աշխատությունը:

Այն բաղկացած էր 140 մեքենագիր էջից, որի հեղինակը «Երկու խոսք»-ով ներկայացրել էր իր աշխատանքի էությունն ու նպատակը, այնուհետև անդրադարձել էր Գրիգոր Տաթևացու կյանքին ու մատենագրական վաստակին և վերջում զետեղել էր աշխատության բնագիրը՝ ըստ ՄՄ № 5871 ձեռագրի:

Ներկայացված ավարտաճառը գնահատվեց բավարար:

7. **Արա սրկ.** Հովհաննիսյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Ս. Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն «Երգոց Երգոյն» աշխատությունը:

53 մեքենագիր էջի սահմաններում հեղինակը ներկայացրել էր Գրիգոր Տաթևացու կյանքն ու մատենագրական վաստակը և «Մեկնութիւն «Երգ Երգոց»-ի» բնագիրը՝ ըստ ՄՄ № 1200 ձեռագրի:

Ներկայացված դիպլոմային ավարտաճառը գնահատվեց լավ:

8. **Սերժիկ սրկ.** Մանսուրյան.

Ավարտաճառի թեման էր՝ «Գրիգոր Տաթևացու «Մեկնութիւն Ժողովողի» և «Իմաստութիւն Սողոմոնի»: Ուսումնասիրությունը բաղկացած է 117 մեքենագիր էջից և ունի հետևյալ բաժանումները.

Ներածություն, Գրիգոր Տաթևացու կյանքն ու մատենագրական վաստակը, «Գիրք ժողովողի աւանդէ Յիսուս», «Յաղագս իմաստութեան Սողոմոնի» (ՄՄ № 1099 ձեռագիր):

Կատարված աշխատանքը գնահատվեց բավարար:

9. Սարգիս սրկ. Ղանդիլյան.

Ավարտաճառի թեման էր «Սսից Կաթողիկոսական Աթոռը տեղափոխելու նախապատմությունից»:

Ուսումնասիրությունը բաղկացած էր նեռրածությունից և «Սսից Կաթողիկոսական աթոռը տեղափոխելու նախապատմությունից» գլխից (50 մեքենագիր էջ):

Ներկայացված դիպլոմային ավարտաճառը արժանացավ բաջալավ գնահատականի: